

կեղեցւոյս դիւանատան մէջ այն անձին վրայօք  
ընաւ յիշատակութիւն չկայ։

Այսպիսի պարագաներու մէջ Ռուսաս-  
տանի հայ առաջին եպիսկոպոսութեան յաջոր-  
դին խնդիրը ռուս պետութեան եւ Հռոմայ մէջ  
բաց ֆնացած է մինչեւ 1909: Մոհիլեւի կա-  
թողիկէ Հայերու եկեղեցին վերոյիշեալ ծե-  
րունի վարդերեսելիչ կառավարչին մահուանէն  
ետեւ (1822)՝ ադմինիստրատոր եղած է վիեն-  
նայի Միսիթարեան Հ. Ռափայէլ Ա. Ուզունեան,  
որ անկէ քանի մը տարի յառաջ իբրեւ օգնա-  
կան կը գտնուէր վարդերեսելիչի մօտ: Ուզու-  
նեանի մահուան (1863) լուրն առնելուն պէս  
Միաբանութիւնը կը ղըկէ իբրեւ յաջորդ Հ.  
Նիկողայոս Ա. Աւգերեանը, որ Հայերու եկեղե-  
ցին լատին եկեղեցականներու մատակարարու-  
թեան յանձնուած ըլլալը տեսնելով, կը ստի-  
պուի անճար վերադառնալ: Իսկ կամենիցի  
Հայերու եկեղեցին արդէն անկէ յառաջ լա-  
տիններու անցած էր:

Երբ 1845ին կայսերական հրամանաւ Քա-  
փուշինները կովկասէն հեռացուեցան՝ 1847ին  
հրատարակուեցաւ պետական օրէնք մը (Օրինա-  
գիրք Հար. ԺԱ. § 75), որով Ախալքալայի վի-  
ճակի կաթողիկէ Հայերը Տրասուպոլեան (Սա-  
րազով) լատին Եպիսկոպոսին իրաւասութեան  
ենթարկուեցան: Իսկ հայ կաթողիկէ եպիսկո-  
պոսութեան խնդիրը թէպէտ այլեւայլ ատեն-  
ներ յուզուեցաւ կառավարութեան մէջ, ինչպէս  
1834ին, սակայն Հռոմայ հետ միաձայնութեան